

ՆԵՐՍԻՍԻԱՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. հեռագրային 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեք Կապիտ. Тифлис, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆ. № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(շաբթի կիրակի և առաւօրեայ օրերին).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզի.

Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրատան տնօրէնին 10 կոպեկով.
Տէլեֆ. № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, յուլիսի 13-ին

ԼԵՒՈՆ ԻՍՐԱԵԼԵԱՆ ՄԻՐԱՌՅԵԱՆԻ

Մահվան քառասուններ օրը, կը մատուցվի պատարագ և ապա կը կատարվի հոգեհանգիստ Կուշկայի ս. Աստուածածնի եկեղեցում (Միքայէլեան պրօսպեկտ, Վորոնցովի ար-
ձանի մօտ), որի մասին հանգուցեալի մայրը, Սօֆիա Առաքելեան, եղբայրներ Գրիգոր,
Ալեքսանդր Միքայէլեանները և Գրիգոր, Ստեփան Թուրանեանները յայտնում են ազ-
գականներին և ծանօթներին, որոնք կը կամենան յարգել հանգուցեալի յիշատակը Պա-
տարագը կը սկսվի առաւօտեան ժամի 11-ին, իսկ հոգեհանգիստը ժամի 12¹/₂-ին:

1-1

Նաւայիա Միքայէլեան, Գեորգ, Ալեքսանդր և Ստեփանոս Գաբրիէլեան Շաքի-
նեանները յայտնելով առաջինը իր յոյժ սիրելի որդու, վերջինները իրանց անուոնանայի
եղբոր՝ Սօֆիայի Կայսերական Համալսարանի, բժշկական բաժնի ուսանող:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳԱՐԻԵԼԵԱՆ ԾԱԴԻՆԵԱՆԻ

Մահվան մասին, խոնարհաբար խնդրում են չնորձ բերել հանգուցեալի յուզարկաւորու-
թեան ներկայ ինչու, որ կատարվելու է ամիս 15-ին, երեքշաբթի, առաւօտեան 10
ժամին, զէպի Թանդոյեան ս. Աստուածածնայ եկեղեցին Նրկուշաբթի, ամիս 14-ին,
երեկոյեան 7 ժամին, ինչու է հոգեհանգիստը Շաքինեանների բնակարանում, Միքա-
յէլեան պրօսպեկտ, տուն № 64.

1-1

ԲՈՒԱՆԴԱՊՈԹԻՒՆ

Տարածված հիւանդութիւն.—ՆԵՐՖԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Ի միջի այլոց. Նամակ Նոր-Բայա-
զէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Պապական գահի շուրջը. Արտաքին լու-
րեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրակար.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՊՈԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն:

ՏԱՐԱՍՎԱԾ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Այս տարի բժշկական մի քանի յանձնա-
ժողովներ գրառված են դիտողութիւններ
և ուսումնասիրութիւններ անելով տեղի
կամ ջերմաստիճանի վերաբերութեամբ:

Այդ հիւանդութիւնը թէև հասարակ
հիւանդութիւն է համարվում, բայց նա
աւելի մեծ վնասներ է հասցնում մեր
երկրի ազգայնականութեան, քան աւելի
սուր ընթացք ունեցող խիստ հիւանդու-
թիւնները: Ամբողջ հարկաւորութեան վերստ
տարածութիւն ունեցող տեղեր ենթակայ
են ջերմաստիճանի ազդեցութեան և հազա-
րաւոր մարդիկ իւրաքանչիւր տարի վնաս-

վում են նրանց զգալի կերպով: Այդ հի-
ւանդութիւնը իր տարածված լինելու
պատճառով, իր մաշող և հալող բնաւո-
րութեամբ, տարիների ընթացքում այն-
քան թուլացնում է մարդկանց կազ-
մուտքը և առողջութիւնը, որ դարձ-
նում է այդ մարդկանց փխրուն ու գիւ-
րաբեկ և ժամանակի ընթացքում կործա-
նում է նոյն իսկ ուժեղ կազմուածքներ:

Ինչպէս յայտնի է վերջին հետազոտու-
թիւններից, ջերմաստիճանի պատճառները ա-
ռանձին տեսակ մոծակներ են, որոնք
իրանց խայթոցներով վարակում են մարդ-
կանց և նրանց հիւանդացնում: Ուրեմն,
եթէ կարելի լինէր այդ մոծակներին հե-
ռացնել կամ անվնաս դարձնել, այն
ժամանակ շատ տեղեր, որոնք այժմ տեղ-
աբեր են համարվում, կարող էին բոլո-
րովն անվնաս դառնալ և ազատել ազ-
գայնականութիւնը այն գոհերից, որ նա իւ-
րաքանչիւր տարի տալիս է ջերմաստիճան:

Մի մեծ յանձնաժողով ներկայումս դի-
տողութիւններ և հետազոտութիւններ է
անում այդ հարցի վերաբերութեամբ
Թերեք գետի ստորին հոսանքում և յոյս

վարդապետին Ներսէս Լամբրոնացիին ու
Խաչատուր Լեւոնեանին Աղթամար և իր Կա-
թողիկոսութիւնը. իսկ երրորդը՝ Բու-
լանք կամ Հարք գաւառ, արդէն երկու
տարի առաջ տալիս էր հետաքննարկ, ձե-
ռագիրները անտիպ մնալով, մեղքն է չա-
փելի օգուտ մը չը կայ. իսկ ազգայնական արդէն
ժանօթ ըլլալով, հեղինակին արուած նուէրը
անոր համար թէև քայքայեալն էր, մըն է, և գոհ
կը մնանք, բայց առանց այդ մրցանակին ալ
այդ գիրքը կը բերէր Մրցանակին օգ-
տակարութիւնը այն պիտի ըլլար որ մեր մա-
տենագրութեան մէջ բան մը մտնէր: Ահա
տանօթ տարի է որ 500-ական ռուբլին կը
տրուէր, ամբողջ գումարը 8,000 ռուբլի մը
չափ եղած է, բայց ո՛ր է գործը մը զոր մեր
մատենագրութիւնը յատկապէս իզմիրեանց
կտակին պարտական մնայ: Մեր մէջ ըլլէ չեն
անոնք որ պատմական ու բանասիրական հե-
ղերը կը մշակեն. ու այդ աշխատողներուն մէջ
գրամի պէտք ունեցողներ կան ու կան Ուսանց
համար, և աղէկ գրողներու, բաղաւորութիւն
մը պիտի ըլլար 500 ռուբլի ստանալ, իսկ երբ
մրցանակաբաշխութիւնը երկամեայ է, արուե-
լիք նուէրն ալ աւելի մեծաքանակ է. Եւ սա-
կայն ոչ ոք առաջին մրցանակ մը առած է:

Մրցանակ բաշխող Մշակույթի Յանձնաժողովին
տեղեկագիրը ուշադիր կարգադրի: Մրցանակի
ներկայացումը առին աշխատութիւն ընելու
թեան ենթարկուած է. Գրանցներուն քննադա-

ռնի մեծ նիւթ ժողովը զործնական մի
շարք եղրակացութիւններ անելու հա-
մար:

Յանկայի էր, որ մեր գաւառներում
ցրված բժիշկները ինքնաբերաբար կատա-
րէին սիւսեմական կերպով դիտողութիւն-
ներ ջերմաստիճանի վերաբերութեամբ և կա-
րող լինէին յաջորդ բժշկական համագու-
մար ժողովին, որ պէտք է տեղի ունենայ
Թիֆլիսում, լրակատար կերպով քննել և մը-
շակել ջերմաստիճանի գէժ մարտեղու միջոց-
ները:

Մեր երկրի փորձը և դիտողութիւնը
միացած Խաչկալի, Ֆրանսիայի, Սպա-
նիայի և ուրիշ եւրոպական երկրների մէջ
արած գիտնական ուսումնասիրութիւնների
հետ, զուգէ կարող լինէին համար առա-
ջարկել փրկելու մեր երկրի ազգայնակու-
թիւնը այն մեծ վնասներից, որոնց նա
ենթակայ է ջերմաստիճանի պատճառով:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի Մ Ի Զ Ի Ա Յ Լ Ո Ց

(Բժիշկ Գ. Դաւեան)

Երբ մենք հասն ենք մոտեմ, ասում է Ժո-
ղովրդական առածը, միշտ ձգտում ենք ոչխար-
ների պարարտը ընտրել: Մանր իր անողորմ գոր-
ծողութիւնների մէջ նմանօրինակ եղանակի է
հետեւում. նա լուրում և տանում է ընտրեալ
ներին թէիշ Դաւեան, իրօք, ընտրեալներից
էր Մեր գաւառական գահի կեանքի աննա-
խանակ կազմում Դաւեանների պէս անհատ-
ները բացառութիւն են կազմում: Բառի բուն
նշանակութեամբ ինտելիգենտ, տոկոս և լա-
ւազոյն իդէալներով տոգորված, հանգուցեալ
բժիշկը առաջադէմ հոսանքի աւետարներ հերչ-
տակներից էր: Բաւական էր մի անշնան ցան-
կութիւն, մի ջնպի, բայց գաղափարական նա-
խաձեռնութիւն, և Դաւեան իսկոյն առաջար-
կում էր իրան որպէս պատրաստված գործնա-
կան ոյժ: Նրա բուն, անկեղծ և հաստատաժիտ
ցանկութիւնները խոնարհութեան անհայտ թշնա-
միներն էին, մասնաւոր երբ այդ խոնարհութե-
անը հիմնված էին ինքնու մի որ և իցէ վե-
րացական օկզդների վրա: Շատ կարճ ժամա-
նակամիջոցում *) Բաթումի արհամարհված, թը-
նագրութեան ամփոփումները հրատարակուած են:

*) Դաւեանը 1902 թի օկզդներում հաստատվեց
Բաթումում, սակայն հիւանդանոցով բնակավայրով
ստիպվեց հեռանալ Գորի:

տուրքիանց ամփոփումները հրատարակուած են:
անոնցմէ կը տեսնուի թէ մրցանակի հետամը-
տող դաս հեղինակներէն եօթը կամ ոչնչու-
թիւնների ներկայացուցած են, կամ՝ գծուած
ծրագրին չեն համակերպուած: Իսկ պատկաւ ե-
րեք գործերը զլրատուապէս համաձայնական
արժանիք մը ունին:

Այս դիտողութիւնները անգամ մը ևս հարց-
նել կուտան թէ ինչու այդ իզմիրեանց մրցա-
նակը իրմէն անկեղծութեամբ օգուտը չի տար: Ար-
դեօք Կովկասի մասումը, ու անոր հետ արտա-
սահմանի գրական մամուլը պէտք չէ նկատու-
թեան առնեն այս տեսակ մը ամբողջական
պատմականները, պէտք չէ հարցնեն փնտռեն թէ
ինչու մրցումին չեն մասնակցել: պատմագէտ-
ներ ու բանասէրներ, որոնցմէ ոմանք նշանա-
ւոր գործեր իսկ հեղինակած են, կամ՝
հեղինակելու կարող են:

Ըստ իս, չարիքին զլրատու մէկ պատճառը
այն է, որ Յանձնաժողովը զգալաբար կանոն-
ութեան կընէ, Ինչու, օրինակ, Լէօի Գրիգոր
Արծրունիին իզմիրեանցի գրական մրցանա-
կին չը մասնակցի: Պարզապէս անոր համար,
որ Յանձնաժողովը այդ գործը և ոչ իսկ նկա-
տողութեան պիտի առնէ. քաղաքական նկա-
տուններ ունի: Ենթադրեցէք թէ գրական
պատմութիւն մը պատրաստուի, որուն մէջ
Մերկնցի, Պէլիթաշեանի, Օտեանի գործերը
քննուին և անոնց կենսագրութիւնները լրովին
գրուին, չեմ կարծիք թէ Յանձնաժողովը ու-

շուտ և աղքատ գաղափարներ, որը բացի ա-
ղօթքներից և խոստովանութիւններից ուրիշ
միջոցների չէր դիմում հիւանդութեան դէպ-
քերում, հանգուցեալ բժիշկը իրան յատուկ համ-
բերողութեամբ ներշնչեց հաւատ դէպի ժամա-
նակակից բժշկականութիւնը, և կատարեալպէս
ձրի օգնութիւններով համոզեց աղէկ կլինա-
ներին, որ սխալ և անհեթեթ կարծիք է իրեն
թէ բժշկականութիւնը հերեթիկոսութիւն է:

Գաղթականների մէջ սուրբերի և մատաղ-
ների միջոցով բժշկվող հիւանդներին նա ան-
պէս քնքոյ և զգոյշ կերպով էր մօտենում, որ
նախապաշարմունքը գիտութեանը աւելի նը-
պաստում էր, քան թէ ինքնուրու «Միլիկ» բը-
ժիշկին լաւ է յիշում տեղական գաղթականը,
և անկեղծ արտով ողբում նրա վաղածամ մահը:
Բաթումի հասարակութիւնը նոյնպէս լաւ է
յիշում տեղական լրագրում Դաւեան ստորագ-
րութեամբ գետնադած յօդուածները, որոնց մէջ
հեղինակը իրան յատուկ անկեղծութեամբ ցա-
ւակցութիւն էր յայտնում ինտելիգենցիային,
որ ժողովրդական կրթական գործում նա
ոչինչ չէ արել և շարունակում է անտարբեր
վերաբերվել դէպի այս կարևոր հարցը: Այդ
յօդուածների առիթով «Ноб. Общ.» և Պայմի
հոգաւոր օրգանի մէջ ծագած բանավեճն
հետեւեցով, Դաւեան ասում էր.

—Տո! Ձեր քաղաքը լրագիրը Երեանի թե-
մական գաղտնի պատկերն է կրում. 2×2=4-ի
դէմ մինչև անգամ վիճում է:

Երբեք եմ մի ուրիշ դէպք ևս. Երեանի ար-
ժանաշխատակ մանկավարժական խմբի հաւա-
քական ստորագրութեամբ «Մակին» ուղար-
կած նամակը լոյս տեսնելուց հանգուցեալը
յուզված ինձ մօտ վազեց:

—Տո! Սա ինչ է:

—Նիւթ տուր հերքենք! —առաջի ես:

—Նիւթ! Ի՞նչ նիւթ տամ քեզ լրագրեան

դէմ:

Հանգուցեալի օրերի ընկեր Լրագրութիւններն
էլ մահ ունեն:

Տիրուհան

Բաթում

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑԻ

Յուլիսի 1-ւն

Մի տարուց աւելի է, ինչ տեղական հասա-
րակութիւնը, գործակալ վարդապետ Մուրադ-
բեգեանի նախաձեռնութեամբ, ձեռնարկել է
մայր եկեղեցու չիւղութեան գործին: Ամբողջ

զէ ակնարկ մը տալ այդպիսի գործի մը, բայց
այդ Յանձնաժողովը չուզէր Վուդեմ խաչատուր
Միսաքեանին կենսագրութիւնը վարձատրել,
պարգապէս այն պատճառաւ, որ «հակիրճ»
գրուած մըն է: Եթէ ընդարձակ ըլլար:

Մեր երկրին պատմութիւնը աւելի քան
տաս դար է խաղաղական արշաւանքներով ու
տորապետութեամբ լեցուն է. կարելի չէ ու
է ուսումնասիրութիւն ընել առանց իսլամը
մէջ խառնելու: և անշուշտ գոհութեամբ չէ,
որ մահմեդականութեան վրա պիտի խօսինք:
Արդի կեանքներն ալ չի բաժնուի մահմե-
տականութիւնէն, ու դարձեալ՝ նպատակաւոր
խօսելու վիճակին մէջ չենք: Ի՞նչ ընէ ուրեմն
պատմաբանը, բանասէրը: Պէտք է անշուշտ
նիւթերու չըջանակը մը մէջ ամփոփուի, այս-
պէս, Սասնեթեան վարդապետին Ներսէս
Լամբրոնացիին ոչ ոքին մատառնուութիւն
կը պատճառէ, վասն զի հեղինակը յաղաղած է
այնպատկարան մը կանգնել հայ եկեղեցւոյ
ամենէն փայլուն դէմքերէն միոյն, և համալ-
նական պատկեր մը յորինել ուր այդ դէմքը
կը ներկայանայ իր բոլոր կողմերով, իր իս-
կական գծերով: Թէև այդ աշխատութիւնը
տեսած չենք, բայց տեղեկագրէն կը տեսնուի,
որ հեղինակը զուտ կրօնական չըջանակին մէջ
մնացած է: Բուլանք կամ Հարք գա-
ւառ գործին համար ալ կրուի, որ հեղինակը
համեն բան զննած, դիտած և ի գիր առած է
ազգային հաւաքողը մը խղճմտութեամբ, և

տաք տարի եկեղեցին խարխուլ դրուծեան մէջ փակված մնում էր, սպառնում էր փուլ գալ և ոչ ոք չէր վստահանում նախաձեռնող հանդիսանալ նրա վերադիմութեան գործին, չը նայելով, որ զա ժողովրդի բուռն ցանկութիւնն էր: Միայն հայր Մուրադբէկեանն էր, որ Նոր-Քայազէտ մանկավ, իր պարտականութիւնը համարեց եկեղեցու կառուցումը, արձագանք տալով ժողովրդի կրօնական տենչանքին: Եկեղեցու կառուցումը շատ անհրաժեշտ էր և գրեթէ առաջնակարգ խնդիր տեղական հասարակութեան համար, քանի որ միւս եկեղեցին իր փոքրութեամբ բաւականութիւն չէր ապրիս մեր քաղաքի եկեղեցաւոր ժողովրդին, որովհետեւ ժամասացութեան միջոցին, մանաւանդ հանդիսաւոր օրերին, շատերը դուրսն էին կանգնում:

Գալով եկեղեցու շինութեան, կասենք, որ այդ գործը որոված է կապալով Նրանի նահանգական ինժեներ պ. Միրզոյեանցին, որը կառուցման գործը ամենայն աղոյսութեամբ առաջ է տանում: Սակայն յունիսի 16-ին յանկարծ աշխատանքները դադարեցնելով՝ ընդմիջեց շինութեան գործը և այդ մի թիւրիմացութեան պատճառով, որ պայմանի մէջ որոշված չէր, թէ եկեղեցու կառուցումը թր պէտք է աւարտուի Միւս կողմից՝ կապալագին մի մասը դեռ չը ստանալով իր ժամանակին՝ ինժեներ Միրզոյեանն սպառնաց դադարեցնել աշխատանքները երկար ժամանակով, մանաւանդ որ մի խոշոր գումար չէաւ ի նկատի ունէր այդ գործի մէջ: Սակայն այդ հանգամանքը ձեռնառու չը լինելով հասարակութեան—կիսատ թողնել եկեղեցին տարիներով—քարուք համարվեց համակերպվել պ. Միրզոյեանցի առաջարկութեան: Չէաւ մի մասը գտնէ ծածկել ժողովրդի կողմից: Եւ ահա հասարակութիւնը ստիպված եղաւ 3000 ռուբլի օժանդակութիւն տալ պ. կապալառուին, որը 2—3 օրվայ ընդմիջումից յետոյ կրկին օկսեց աշխատանքները և պարտաւորվեց եկեղեցու կառուցման գործը աւարտել 1905 թվին, չը նայելով որ սկզբում խոստացված էր եկեղեցին յանձնել 1903 թվ աշնանը: Այսպէս թէ այնպէս եկեղեցին կառուցվում է մեծ եռանդով և մի գեղեցիկ «Ֆասադ» ունի: Ժողովուրդը այնուամենայնիւ շատ ուրախ է, որ 2—3 տարվայ ընթացքում այսպիսի չքեղ եկեղեցի կունենայ, մինչդեռ աւելի մեծ քաղաքների եկեղեցիների կառուցումը տասնեակ տարիներ է տևում:

Չը մոռանանք իշխել, որ մեր քաղաքի եկեղեցու կառուցումը կատարվում է ժողովրդի կամաւոր աղքատիկ նուէրներով, որոնց հանգանակութեան համար ոչինչ ջանք չէ խնայում հ. Մուրադբէկեան, յորդորելով քաղաքացիներին նպաստել Աստուծու տաճարի շինութեան: Իսկ հասարակութիւնը իր ոյժերը ներածին չափ կատարում է իր պարտականութիւնը, թէ փող վճարելով և թէ սպայեղով քար և աւազ կրելով:

Կան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ուրբաթ, յուլիսի 11-ին, կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին Պետերբուրգից վերադարձաւ Թիֆլիս:

«Մշակի» շաբաթ օրվայ համարը լայն տեսակ մեզանից անկախ պատճառներով, իսկ հետեւալ 151-րորդ համարը, Վարդավառի տօների պատճառով, լայն կը տեսնի չորեքշաբթի յուլիսի 16-ին:

Հինգշաբթի յուլիսի 10-ին, Թիֆլիսի ձիաքաշի անճիմ ընկերութեան ներկայացուցիչը համաձայն Թիֆլիսի դուռայի որոշման, քաղաքային ուղարկւային յանձնեց 49,000 ռուբլի, որպէս գրաւական Ֆունիկուլեօրի շինութեան:

Թամաշեվի քարվանսարայի և Դօրցովայի փողոցի վաճառականները, համաձայն առաջարկութեան վաճառականների աւագ Ալիքի եղանի—ստորագրութիւն տալ և պարտաւորվել խանութները քանալու թէ ամառ և թէ ձմեռ՝ առաւօտեան ժամի 8-ին և փակելու երեկոյեան ժամի 8-ին, բոլորն էլ յայտնեցին իրանց համաձայնութիւնը: Ստորագրվել են 85 հոգի: Արդէն յուլիսի 5-ից այդ վաճառականների խանութները երեկոյեան ժամի 8-ին փակվում են, բացի այն խանութներից, որոնք վաճառում են ուտելիքներ:

«Новое Обозрение» լրագրում կարդում ենք. «Петерб. Вѣд.» լրագրի խմբագրի հարցը, ինչպէս մեզ հաղորդում են Պետերբուրգից, վերջնականապէս վճռված է առաջադիմութեան բոլոր բարեկամներին համար նպաստաւոր կերպով: Վերջիվայր բոլոր ջանքերը ապագային անցան, յիշված լրագրի խմբագիր մնում է իշխան Ուխտամիլին:

Մենք հաղորդել էինք, որ Սեվաստոպոլում սպանված է մի թիւրք և վիրաւորված է մի ուրիշը երկու թիւրքահայ զաղթականների ձեռքով: Այժմ ողւս լրագրիները յայտնում են, որ սպանութիւն կատարող թիւրքահայերից մէկի անունը Բարոնակ Մկրտչեանն է, միւսին՝ Նշան Յարի—Էսկէլին (?): Սկզբում Նշանը չէին խոստովանում իրանց յանցանքը, բայց յետոյ խոստովանեցին և բացատրեցին, որ սպանութիւնը կատարել են վրէժխնդրութիւնից գրգռված, որովհետեւ սպանված թիւրքերը շատ չարիքներ են գործել Թիւրքիայում:

Պետական խորհուրդը, ընկելով ուռւաց սինոդի աւագ-պրօպոստի առաջարկութիւնը՝ դրամական նպաստ նշանակելու պետական գանձարանից ուռւագրական եկեղեցիների շինութեան համար: Անդրկովկասի այն գիւղերում, ուր բնակվում են ողւս զաղթականները, որոնց ներկայ 1903 և հետեւալ 1904 թվականներին ընթացքում 20,000-ական ռուբլի տալ պետական գանձարանից, իսկ 1905 թվականից սկսած նախահաշուի մէջ մտցնել կրէդիտ նշին:

Այս օրերս վերստին շատ կը խօսուի պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի «Մայրենի» Լեզունի նա, զոր նախ Արարտեանը և և յետոյ Միացեալ ընկերութիւնները տպագրեցին: Միացեալ ընկերութիւնները երեք տարի առաջ լուծուեցան պատրիարքարանին տկարութեամբ. մեծաքանակ պարտքեր մնացին, ի միջի այլոց Հայաստանի ուսուցիչներուն Պատրիարքարանին մէջ կազմուած մարմինը մը ընկերութեանց հաշուէյարդարութիւնը պիտի ընէր, այսինքն՝ առնչիքները գտնաէր, պարտքերը վճարելու ինչ առնելիք կար: Ոչինչ, ու պարտք չաւտ: Եւ այդ ամենուն դէմը՝ Մայրենի Լեզունը կը մը նախ: Եւ ահա մէկ քանի տարուան մէջ, այդ դատագրին վաճառուէն գոյացած չափով ընկերութեան թողած պարտքերը ամբողջապէս կը վճարուին, ու այսուհետեւ ալ Հայաստանի աղքատիկ զարգացնելու համար այդ գործըն յապնով հասոյթ մը կը հոգացուի:

Երբ 1881-ին Գ. Պօլոյ կրթական երեք ընկերութիւնները միացան, պ. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի Լեզունը իրենց էն հաստատուն կալուածը կը նկատէին: Այդ գործին չորս հասարակութիւններէ մէկը ծախուէին, իւրաքանչիւրը՝ 25 կամ 40 կօպէկ՝ բայց և այնպէս տարին 4,000 ռուբլի մօտ գումար մը գումար հասոյթ կը թողուին, ամեն ծախել յետոյ: Այդ դատագրիքը քան և հինգ տարի ի վեր է որ Պօլո կը տպագրուի թողած գումարը չիւնըր տարուէ տարի միշտ աւելցած է:

Նպատակի համար այնքան գումարի, որքան հարկաւոր կը լինի, սակայն յամենայն դէպօ տարեկան ոչ 20,000 ռուբլուց աւելի:

«Вак» լրագրում կարդում ենք. «Երէկ, յունիսի 10-ին, ձիաքաշի երթեկութիւնը վերականգնվեց: Վազմենները ամբողջ օրը չըլուէին երկու զինուորի ուղեկցութեամբ: Շատ կօնդուկտօրներ չիւնան աշխատանքի, նրանց փոխարինեցին քրդները, քրդներին փոխարինեցին վարձակաւները, իսկ կօնտրօլօրներին փոխարինեցին աշխատում էին ձիաքաշի գրասենեակի ծառայողները:

«Приаз. Край» լրագրին հաղորդում են Նիժնի-Նովոգորոդից, որ «Петръ І» շոգենաւի կործանման ժամանակ խեղդված ճանապարհորդների թիւը 60-ից աւելի է:

Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին օգնող կօմիտէտը պատրաստել է մանրամասն ղեկուցագիր իր գործունէութեան մասին: Այդ ղեկուցագրին կցված կը լինի մանրամասն դրամական հաշիւ: Զեկուցագիրն արդէն յանձնված է տպագրութեան:

«Терск. Вѣд.» լրագրում կարդում ենք. «1899 թվականին առաջին անգամ Կովկասի տեղացիները զինուորագրութեան կանչվեցին այնպիսի գործառնութեամբ, որոնք գտնվում են Կովկասից դուրս: Ներկայ տարվայ այնպէս նրանք, վերջացնելով ծառայութիւնը, կը վերադառնան տուն: Ուշագրութեան առնելով այս հոնգամանքը, կովկասեան զինուորական չըլանի հրամանատարի օգնականի կարգադրութեամբ, զինուորական շտաբի կառավարիչը դիմել է Թերեքի չըլանի կառավարիչին՝ խնդրելով մանրամասն տեղեկութիւններ հաղորդել այն մասին, թէ ինչ արամագրութեամբ կը վերադառնան այդ զինուորները, ինչ տպաւորութիւն են նայեց դուրս բերել իրանց ծառայութեան մասին եւրօպական Ռուսաստանի նահանգներում, ինչպէս է ազդել կենքը իր բոլոր երկայնքով նրանց վրա հայրենիքից դուրս, որքան նրանք իւրացրել են ողւս կենքի առանձնատկոթիւնները, ողւսական քաղաքացիականութիւնը և ողւսաց լեզուն, նոյնպէս և այն, թէ ինչ տպաւորութիւն կը գործէ նրանց գալով տեղագրիների վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՅՄԱՆ ԳԱՀԻ ՇՈՒՐՁԸ

Հռօմից, յուլիսի 5-ից, Պետերբուրգի լրագրիներին հետագրում են. «Մանկան օրը վախճանված պապի մարմինը կանդամահատվել և կը զմալի, իսկ աղիքները անյապաղ կը դրվեն պողպատէ արկի մէջ և կը թաղվեն Ե. Պետրոսի տաճարի ներքնակներում: Սիրտը առանձին ամանի մէջ կը դրվի և, շատ հաւանական է, կը դարկվի Կարպիսօտ քաղաքի քանիշինին, — Լեոն XIII-ի ծննդեան տեղը, որոնք կը պահեն այդ սրբազան մատուցելու թաղումը:

Բայց եւ Էն նուազը կանեն, տարեկան 4,000 ռուբլին Ուրեմի քան և հինգ տարուան մէջ ողւսահայ մը իր գրական մէկ աշխատութեամբ Հայաստանի դատարարականութեան գործին քիչէն քիչը 100,000 ռուբլի տուած է: Այս գումարին կրկնապատիկը իսկ ըսելու իրաւունք ունիմ, բայց համեմատել 100,000 ռուբլին բաւական կը համարին: Հարիւր հազար, ունենք շատ բարեբաւներ որ այդքան գումարներ մեզի նուէրած ըլլան: Թողունք որ այդ ճշմարտութիւնը կը շարունակուի անպայման ժամանակի համար: Տպագրութիւնները կը յաջորդեն տպագրութեանց, ու լաւագոյն մատակարարութեամբ մը շատ աւելի մեծ արդիւնքներ ձեռք կը բերուի: Նկատողութեան չառնելը նաև նախնական կրթութեան զարգացումին: Ընձեռած ամենամեծ օգուտները, միայն և միմիայն չօչափելի դրամը աչեքներու առջև ունենանք՝ հարիւր հազարը, էն նուազ հաւանական թիւը: Պօլոյ լրագրիներում մէջ քանի մը օր առաջ կարդացել էի Մայրենի Լեզունը չորսիւ Միացեալ-Էնկերութեան պարտքերուն ամբողջակի վճարման լուրը, այսօր ալ կը ստանամ Պօլոյ թիւթերը որոնք իզմիրեանց կտակին մրցանակաբաշխութեան հանդէպ կը պատմեն Նկարագրութեան մէջ հետեւալ միջոցաւ—կամ թէ՛ վերջնադէպ՝ աչիւ գարիւս: Արեւելք կիմացնէ թէ «Ս. պատրիարքը՝ խորհրդարանին մէջ կալուածները բարեբաւներուն՝ Յովսէփի իզմիրեանցի և Մկրտչի Սանատարեանցի պատկեր

տեղի կունենայ պապի մահից երեք օր յետոյ: Մարմինը կը դրվի մի տարով ժամանակաւոր դամբարանում, որը կը շինվի Ե. Պետրոսի տաճարում: Մի տարի անցնելուց յետոյ Լեոն XIII-ի մարմինը կը փոխադրվի Ե. Յովհաննէսի թաղիկը թաղվելու համար, ուր ինքն հանգուցեալ տեղ է բնտրել իր համար: Ընդունված սովորութեան համեմատ, այն կարգինալները, որոնք ծիրանի են ստացել վախճանված պապի ժամանակ, պարտաւոր են հոյակապ շիրիմ կանգնեցնել պապի համար իրանց սեփական միջոցներով: Պօլո IX առաջին անգամ ազատեց կարգինալներին այդ պարտաւորութիւնից և չիրիմ կանգնեցնելու համար թողեց յատուկ գումարներ: Արդեօք Լեոն XIII հետեւեց իր նախորդի օրինակին, առ այժմ յայտնի չէ: Յամենայն դէպս չիրիմի կառուցումը թանգ չի նիստի կարգինալներին, որովհետեւ նրանք բոլորն էլ, բացի Օրէնիայից, կարգինալական ծիրանի են ստացել Լեոն XIII-ի օրով:

Պօրտոգալիայում արդէն արտակարգ պատգուութիւններ են տեսնված զուգ պահելու համար Լեոն XIII-ի մահվան առիթով: Յիւլիոս համեմատ, պօրտոգալական թագաւորը, հէնց որ կը ստանայ պապի մահվան լուրը, կառանձնանայ իր սենեակներում և երեք օր ոչ ոքի չի ընդունի: Նուաւորմից և նուաւորմիցիւնների բերդերից քառորդ ժամ շարունակ թնգանօթագրութիւն է լինում: Երեք օր փակված կը լինեն թատրոնները և զուարճութեան տեղերը: Կառավարական տեսանկյունից—նոյնպէս: Պաշտօնները պարտաւոր են սեւաւորվել, իսկ հասարակութեանը առաջարկվում է մէկ ամիս սուգի չորս հազնել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Կ. Պօլոյց հաղորդում են արտասահմանեան լրագրիներին, որ թիւրքաց սուլթանը հիւանդ է: Բիֆլիսից արդեօք նրա հիւանդութիւնը ն է վրա տեսնի ա է մարմինը ընդհանուր թուլութիւն: Սուլթանին պատերիկ են լողանալ հանքային ջրերում:

Գինեթալ Լուի Բօտա, որ այնքան մեծ ջանք էր գործ դրել անգլիական և հօլլանդական ազգաբնակչութիւնը միմեանց հետ հաշտեցնելու: Հարաւային Աֆրիկայում և որ այնքան ժողովուրդականութիւն է վայելում Լօնդօնում ու հաւատարմութեան երդումն է տուել Էդուարդ թագաւորին, բացառականապէս իրան հակառակորդ հատարակեց բրիտանական կառավարութեան «Times» լրագրում տպագրված է Բօտայի երկար նամակը, որի մէջ նա ասում է, թէ Չեմբերլէն ոչ մի աղոյսներ չունեցաւ հարաւային Աֆրիկայում, գտնէ Տրանսվալում, և նրա բոլոր ջանքերը նպատակի չը հասնու Բադի մի միտինգից: Չեմբերլէն իր տեղեկութիւնները քաղում էր այնպիսի աղբիւրներից, որոնց մասին աւելի լաւ է լուր: Դէպքից և Դէպքից հետ միասին Բօտա հրաժարվում է մնալ օրէնսդրական խորհրդի անդամ, որ հնարաւորութիւն չէ տալիս նրան համակերպելու բօքսական ազգաբնակչութեան պահանջներին, մանաւանդ որ Չեմբերլէնին ներկայացրած բոլոր միջնորդութիւններն և խնդիրները թողնում են անհետեւանք: «Daily Telegraph» լրագրին հաղորդում են Հաւագայից, որ յուլիս ամսի վերջերին

ները ներկայացուց ժողովականներուն, օրհնելով անոնց յիշատակը: Ս. պատրիարքը պահպանիլով վերջ տուաւ իր բանախօսութեան: Այս արտագրութեամբ եղարկացութիւն մը հանելու պէտք չունիմ անյուշու: «Մշակ»-ն ընթերցողը աչքին առջև պիտի տեսնէ դաւն հեղութեան նմանող հակադրութիւնը: Մարդը որ տարեկան 500 ռուբլի մը յատկացուցեք է ազգային մատենագրութեան ի նպաստ, անոր պատկերը Ազգային խորհրդարանի մը մէջ ազգին օջանայգիները ի տես կը դրուի, ու մարդը որ մեր ազգային դատարարականութեան էն մեծ բարեբաւներէն մէկը եղած է՝ անոր և ոչ իսկ անունը անգամ մը կը յիշատակուի: Ինչ կըրոնանք ըսել, անոնք «Աղայ» կը կոչուին, ու տիտղոսը անուան նախադաս. «Աղայ Մկրտչի Սանատարեանց, Աղայ Յովսէփի իզմիրեանցի, իսկ միւսը պարզ «պարոն» մը և ոչ իսկ Աղանուշտ մը, կամ գտնէ «Աղան» մը: Անոնք դրամային մարդն են, ու դրամը իր անարատ սրբութեանը մէջ կը մարմնացնեն, առանց մտաւորականութեան խառնուրդի, միւսը՝ միւսը կը ներկայացնէ առանց գրամայն տպարարականութեան: Բայց կրթական պատմութիւնը, մեր վերածնունդի տարեգրութիւնը անշնչելի յիշատակ մը պիտի պահեն պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեանցին, ինչպէս առաջին ապացոյց և կարձանագրենք «Մշակ»-ի մէջ, որ Ռուսիոյ և Թիւրքիոյ հայոց սերտ մտերմութեան մեծ թուականը այդօրեց:

չական եկեղեցու կառուցմանը վարչությունը պետք է կենտրոնանայ կառավարչական հիմնարկությունների տեսչության տակ և որ պետք է ժողովրդական լուսավորության միջնորդական տեսչությանը յանձնել վերոյիշյալ եկեղեցու այն միջոցները և գույքերը, որոնցով պահանջվում էր հայ-լուսավորչական ծխական դպրոցների գոյությունը: Յայտարարված է, որ ստատկացրած պահպանության դրույթին է մոցնվում Նիժնի-Նովոգորոդում և նրա շահմանակից չորս գաւառներում տնտեսական ժամանակ

12 յուլիսի
ՍՏՐԱՎՈՐԻՐԳ. Յուլիսի 11-ին բացված է երկրորդ միջազգային սեյսմոլոգիական համաժողովը, որին մասնակցում են 20 պետություններ: Փոխարքայ իշխան Հովհաննիսյանը այստեղ և ողջունեց համաժողովը Գերմանական կայսրության անունից: Պրոֆեսոր Լեվինգին իւրեւիյց և պրոֆեսոր Պալացո Հոմից չնորհակալութիւն յայտնեցին փոխարքային ժողովի անունից:

ՍՕՅԵՍ. Իշխանը իր երեխաներով գնաց արտասահմանում Նա Կորուրդ կերթայ և երեխաներին կը թողնէ Իւրեյնաւում պրինցուէի Կլէմէնտինայի մօտ, իսկ ինքն երկար ժամանակ կը մնայ մի որ և է տեղ ջրերում: Ուղևորվելուց առաջ իշխանը ունկնդրութեան ընդունեց մինիստր-նախագահին և զինւորական մինիստրին: «Державенъ Вѣстникъ»-ում հրատարակված է զինուժ ժողովրդին, որի մէջ մատնացոյց է արվում, որ իշխանը մի քանի օրով հեռանում է իշխանութեան սահմաններից: Իշխանը ինամակալութիւնը յանձնեց մինիստրների խորհրդին, որը լիազօրութիւն ունի կառավարել երկիրը մինչև իշխանի վերադարձը: Սերբիական լրագրողները Բելգրադում յուլիսի 11-ին տպագրին յուլիսի տեղեկութիւններ, թէ գործերի դրութիւնը կրիտիքական է Սօֆիայում և թէ կարենէտի ստիպմամբ իշխանը հեռացել է երկրից և դաւադրութեան պատճառով այլ եւս չի վերադառնալ: Փինանսների մինիստրը և ներքին գործերի մինիստրը արձակեցին ակցիզային ղէպարտամէնտի բազմաթիւ պաշտօնեաներին:

ՕԴԵՍՍԱ. «Թաղուհի Օլգա» շոգնաւով Պիրէյից ժամանեց յունական արքայորդի Խրիստօֆօր և երեկոյան ուղևորվում է Պետերբուրգ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Թէ ինչպէս հայ-լուսավորչական եկեղեցու հոգևորականութիւնը կառավարում է իրան պատկանող կալուածքները, դրա մասին կողմանեան Բարձր Իշխանութեան հաւաքած տեղեկութիւնները երևաց, որ այդ վարչութիւնը չէ համապատասխանում ոչ պետական իշխանութեան նպատակներին, ոչ էլ հէնց իր եկեղեցու օգուաններին: Հայ-լուսավորչական եկեղեցական դպրոցները և նրանց պատկանող գույքերը ժողովրդական լուսավորութեան միջնորդական տեսչությանը յանձնելու մասին 1897 թիւ յունիսի 2-րդ և 1898 թիւ մարտի 26-ից արձակված Բարձրագոյն հրամաններից յետոյ հայ-լուսավորչական հոգևոր երարխայի կողմից զինադրութիւն սկսվեց, որ արտայայտվեց նրանով, որ իր ձեռքում պահեց մի քանի կալուածքներ, որոնցով պէտք է ապահովվէր դպրոցների գոյութիւնը: Դրա նման երեսոյթները վերացնելու համար, անհրաժեշտ է համարված կենտրոնացնել հայ-լուսավորչական եկեղեցու գույքերի վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան մէջ: Այդ առարկայի վերաբերմամբ Մինիստրների Կօմիտէին որոշումը արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան ներկայ տարվայ յունիսի 12-ին Այդ օրէնքը, պահպանելով հայ-լուսավորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը մասնաձիւ արված գույքերի վրա, չէ զրկում նրան ստացվող եկամուտներից այն մասում, որը ազատ կը մնայ դպրոցների պահանջութեան համար ծախսերը ծածկելուց յետոյ: Հայ-լուսավորչական եկեղեցու կարիքները հոգալուց յետոյ ի նկատի կայ եկամուտների 50% յետ գեղւու միջոցով հիմք դնել այդ եկեղեցու օժանդակիչ դրամագլխի Մի այդպիսի դրամագլխի կազմակերպութիւնը կարող է ապահովել հայ-եկեղեցու բարօրութեան կանոնաւոր դարգացումը, այն ինչ այժմ այդ դաւանութեան պատկանող նշանաւոր թւով հաստատութիւնների մէջ, որոնք ընդարձակ կալուածքներ ունեն, կան շատ ծուխեր, որոնց միջոցները չափազանց սուղ են, և զիւղական հոգևորականութիւնը քիչ է ապահովված:

Խմբագիր ԱԷՐԱՆԻՐ ԲԱՎԱՐԱՐ
Հրատարակիչներ ԲԱՅԻՆԻ ԶԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻՐ-ԱՆԱՄԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Թիֆլիսի Հակա-արհեստական ընկերութեան
Հաւարարի բաժանունը
Ն. ՄՈՒՐԱՇԿՈՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Կիրակի, յունիսի 13-ին հայ թատերասէները, մասնակցութեամբ տ. Զարէի և պ. Ամօ-Նա-րազեանի կը ներկայացնեն

ՊԱՐԻԶԻ ԱՂԲԱՏՆԵՐ
Դրամա 5 գործ. և 7 պատկ.
Սկիզբն է 8 ժամին երեկոյան:
Տեղերի գինը 5-ից մինչև 50 կօպէկ:

ԲԱՅԻՆԻՍ
«ՊՐՕՄԷՏԷՆՍ» ԸՆԿ. ԴՐԱՎԱՃԱՐԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են մեծ քանակութեամբ
Վ. Փափաղեան, Կորսված արդարութիւն. 5 կ.
Ա. Ն. Ս., «Յարութիւն Արարատեանի կեղծերը». 50 կ.
Եղիա. Ստիւարտ Ֆիլպսի, Գթութեան բայր. 15 կ.
Լէօ. Ախտանանութիւն. 40 կ.
Երևելի մարգիկ 1.
Վիկտոր Հիւգօ, Դաւիթ Լիփինգսոն. . . 15 կ.
Խորհուրդներ իտալիացի մայրերին, թարգ. Ն. Դաւթեան. 15 կ.
Ա. Արէլեան, «Միկիի ապահարգանք» 30 կ.
Ս. Աւետիքեան, Իրանդիայի դատը. . . 80 կ.
Մ. Մարտի, հրատ. Յ. Սարգսեանի. . . 10 կ.
Մ. զը Մամուր, Աղվալայի գործը. . . 10 կ.
Mars, Եփրմէ. 25 կ.

Նաև Բ. Բուդուլեանի, Բժ. Արծրանու, Բաֆֆի, Ահարոնեանի, Առաքելեանի, Մերենցի, Արքիմանի, Լէօի և ուրիշ հեղինակների գրուածքները:
Դիմել. Բաքու, Красноводская д. Амирова. 1—4

Լ յ յ տ ե ս ա լ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍՍԵՆԱՆԻ

ՐԱՖՖԻ
Նրա կեանքը և գրական գործունէութիւնը, համառօտ տեսութիւն
Գինն է 10 կօպէկ:
Պահեստը «Գլուտոնները»-ի մօտ 1—3

ԳՈՒՏՏԵՆԻԵՐԳ
գրախանութում վաճառվում են
ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
հետեւեալ աշխատութիւնները.
ԵՎԼԻԼԱ. 50 կօպ.
Նոյնը թարգմ. ռուսերէն. 70 »
ԹԻՒՐԲԱՑ ՀԱՅԵՐԻ ՏԵՏԵՍԻԱՆ ԴԵ-ՐՈՒԹԻՒՆԸ. 20 »
Նոյնը թարգմ. ռուսերէն. 25 »
Դիմել.—Книж. магаз. „Гуттенбергъ“ д. Лалаева, Дворцовая, Галустяну. 6—10

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

Նախկին օրդինատոր ՎՍ. Պետերբուրգի Աջա-բուժական Հիւանդանոցի
ԱՅԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ընդունում է աչքի հիւանդութիւն ունեցողներին ամենայն օր.
Առաւօտեան ժամը 9-ին մինչև 12
Երեկոյան 5-ից մինչև 7
Հասցէն. Եկիւսմիսովսկայա փ. ա. № 8. 14—20

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ Ժ
ՕՐ. Ս. ՇԵՐՄԱՋԱՆԵԱՆ

ՀԻՒԱՆԴԵՆՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՄԱՆԳԼԻՍՈՒՄ,
ՀԱՍԱՆ-ՋԱՎԱԿԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ
86—105

Լոյս տեսաւ.
ՆԵՐԻՍ Ե ԿՈՒ ՈՂԻԿՈՍԻ

Լուսաւիպ մեծադիր պատկեր
Գինը 20 կօպ.
Գուժարով գիշումն կը լինի
Դիմել՝ Գոտոմիյա Ս. Կոմոմիյա, Թիֆլիս. 2—3

Փ յ ը Ր Ա Ր Մ Ո Ն Մ Ն Գ Ր
Նշան Դաւիթ Բարիկեան

քսան ասրեկան, կը փնտռուի իւր ազգակից-ներէն: Ուստի կը խնդրուի որ, ով որ գիտէ իշխանին տեղը, մարդասիրաբար հաճի տեղեկութիւն տալ հետեւեալ հասցեով.
Bagdasar Boyadjian,
Caire
Babel-Chahrié
(Egipite)
Pour Eram Parikian 2—5

Թրանսիական Շոգնաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES»

21-ին յուլիսի (3-ին օգոստոսի ըստ Ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյան ժամը 5-ին, «Tigre» շոգնաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Աստիօն, Կ. Պօլս, Կարթագեն, Ջիւնիօ, Պիրէյ, Մարսէյլ, Հալոյ և Լոնտօն:
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նոյսպէս և մինչև Շանհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ քիւնցոյնների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակաս-քան զներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արքիմանու գաղերչուն, № 127 գրասենեակը, հեռախօս № 608: Դրանք տեղեկը բաց է ժամը 9—1-ը ցերեկվայ և 5—7-ը երեկոյան, բացի կիրակի օրերից: 1—1

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
(Թիֆլիս, Տոլոլապի, Լերմոնտօւսկայա, № 9)
Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ ժամանակակից առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ: Առեւտրողները ստանում են ատտեստատներ:
Աւանդելի առարկաները արանք են՝ 1) Առեւտրական Տեսուչութիւն. 2) Առեւտրական Թուաքանութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաքանութիւն համրիչ վրա. 5) Առեւտրական Թղթակցութիւն. 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղադրութիւն, վատ ձեռքի ուղղելը:
Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա Պարագմունքները կուրսե-րում լինում են ամեն օր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, տաւառեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի ընկալարանում, Սոյալակում, Ալեքսանդր Փրիշնովի տանը № 9, Սերգիեւսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում: Մրաքիւր և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի ընկալարանում: Օտարաբաղադրացիք դի-մում են՝ Թիֆլիս, Ս. Ս. Մանուէլյանց. (Կ. Կ.) 6—25

Ժիւանսների մինիստրութիւնից հաստատված
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար
[Բաքու, Բրաչեսկայա, Ժոմ Երթ-Օւանցօւա]
Կուրսերի նպատակն է՝ սալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ: Առեւտրողները ստանում են ատտեստատներ:
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական Թուաքանութիւն և Թուաքանութիւն համրիչ վրա. 2) Հաշւապահութիւն՝ առեւտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առեւտրական Թղթակցութիւն. 4) Առեւտրական անտեսագիտութիւն. 5) Առեւտրական և մուր-հակային օրէնքներ. 6) Գեղադրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսու-ցումն գրող մեքենայի վրա:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր, կուրսերում՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյան 4-ից մինչև 7 ժամը: Կուր-սերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) — տրվում է ուղարկվում են ձրիապէս: Օտարաբաղադրացիները դիմում են՝ Բաքու, Учредителю Коммерческихъ Кур-совъ А. И. Теръ-Каспарову. (Կ. Կ.) 3—25

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА XVI-й годъ изданія XVI-й
Въ 1903 году г.г. ПОДПИШКИ ПОЛУЧАТЬ БЕЗПЛАТНО
24 КНИГИ СОБРАНИЯ СОЧИНЕНИЙ
Вс. С. Соловьева.
автора историч. романъ „Сергѣй Горбатовъ“, „Вольтерьяноцъ“ и др.
Въ каждой книгѣ отъ 112 до 240 и болѣе стр., отпечатан. на главлр. бумагѣ
— Это собраніе сочиненій стоить 15 руб.
36 №№ рѣшѣно иллюстрировать журналу, въ которомъ будетъ печататься новый интересный романъ г. В. А. Сазанова „Добродѣтель“, со множествомъ рисунковъ и полезныхъ указаний: 12 №№ журнала „Парисіянскія Мода, Хозяйство и Домоводство“, 12 №№ выкроекъ на отдѣльныхъ большихъ листахъ.
Кромѣ всего этого, годичныя подписки получаютъ
ВЕСПЛАТНО картину проф. Ю. Ю. КЛЕВЕРА
„ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ“ Размѣръ картины, отпечатанной масляными красками, 12х18 верст.
Въ отдѣльной продажѣ цѣна этой картины 5 руб.
ПОДПИСНАЯ ЦѢНА: за годъ безъ дост. въ СМ.—6 р., съ дост. и перес. 7 р., за 6 м.—3 р. 50 к., за 3 м.—1 р. 75 к., за границу—II р. РАСЧЕТКА допускается по рекоменд. и четвертью года. Подписки просить адресовать на имя редактора-издателя Ивк. Сед. Мортца. (СНБ., Москва, 1903).
ГЛАВНАЯ КОНТОРА ЖУРНАЛА „СВЕРЪ“: СНБ., ВЕРСКИМ, 170
19—21